

“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.


ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՏԵՄԲԵՐ 1, 1892

ԹԻԻ 11

“ԿՈՅՐ ԷՒ ԵՒ ՀԻՄԱ ԿԸ ՏԵՄՆԵՄ”

Գեղեցիկ պատմութիւն է այն զոր Յովհաննէս կը պատմէ իւր Աւետարանին իններորդ գլխուն մէջ՝ կոյր ծնող մարդուն վրայ: Չթուիր թէ մարդը խնդրեց բժշկութիւն նման Բարտիմէոսի, և հաւանականապէս Յիսուսի հանդիպելէն առաջերբեք չէր անցուներ մտքէն թէ իրեն հնար էր բժշկուիլ, վասն զի քսաւ Հրեաներուն, «Աշխարհիս սկիզբէն ի վեր լսուած չէ որ մարդ մը կոյր ծնածի մը աչքերը բացած է»: Բայց Յիսուսի ձայնին և խօսելու կերպին մէջ կար բան մը որ հաւատք ներշնչեց կոյրին ներսի գին. և ի՞նչ բերկրութեան վայրկեան էր այն իրեն համար: Մինչև այն ժամանակ երբեք տեսած չէր և բոլոր իւր կեանքը խաւարի մէջ անցուցած էր, և կ'ակնկալէր թէ խաւարի մէջ պիտի մնար մինչև վերջը: Այն տանն անցորդ մը կը կենայ, կ'առով կը ծեփէ անոր աչուրները և կ'ըսէ որ երթայ լուացուի Սելովամի աւազանին մէջ և պիտի տեսնէ: Չեմ կարծեր թէ դանդաղեցաւ հնազանդիլ այս պատուէրին: Չըսաւ, «Իս հիմա յոյնած եմ, վաղը կ'երթամ լուացուիլ աւազանին մէջ»: Գնաց անմիջապէս և լուացուեցաւ, և ի դերև չէրաւ իւր հաւատքը: Եւ երբ խնայութիւն Հրեայք որ և իցէ պատճառաւ կ'ատեն իւր այն բարեկամը և բարերարը, չվարանեցաւ երախտաղխտութիւն յայտնել նմա, այլ հրատարակեց թէ Յիսուս բացած էր իւր աչուրները, մինչև անգամ թէպէտ այդ պատճառաւ արտաքուսեցաւ ժողովարանէն: Եւ վարձատրուեցաւ իւր անկեղծութեանն համար երբ Յիսուս դարձեալ պատահելով անոր յայտնեց իւր անձն իրբն Ուրդի Աստուծոյ: Երախտաղխտութեամբ և ցնծութեամբ ըսաւ նա,



Ի ԵՆ ԿՈՅՐԻՆ ԲՈՅԿՈՒԹԻՒՆԸ

«Կը հաւատամ, Տէր», ու անոր երկը պագութիւն ըրաւ: Եթէ Յիսուս բացած է մեր հոգւոյն աչուրները և ազատած է զմեզ մեղաց և դատապարտութեան խաւարէն, մեք ևս պարտիմք խստապահիլ

ինչ որ նա ըրած է մեզ համար, և հաւատարիմ լինել անոր, մինչև անգամ եթէ այս պատճառաւ զրկուինք մեր շուրջ զանուղներուն բարեկամութենէն:

ՍՈՂՈՄՈՆԷՆ ՄԵԾ

Սողոմոն հարուստ էր, Փրկիչն մեր ազգաստ էր: Սողոմոն ծնաւ պալատի մէջ, Յիսուս մտորի մէջ պառկեցաւ փոխանակ օրորոցի: Սողոմոն թագաւոր էր Երուսաղեմի մէջ, Յիսուս հիւս էր Նազարեթի մէջ: Սողոմոն ունէր համբաւ և պատիւ և պերճութիւն, Յիսուս էր ողորմելի ճանապարհորդ և թափառական երկրի վրայ: Սողոմոն նստաւ դահլիճի վրայ, Յիսուս կախուեցաւ խաչի վրայ:

Սարայի թագուհին հեռի երկրէ եկաւ ըսել Սողոմոնի իմաստութիւնը. բայց Սողոմոնէն մեծ մէկը կը պտըտէր Հրէաստանի և Գալիլեայի բլուրներուն և հովիտներուն վրայ և կը քարոզէր արքայութեան աւետարանը, և մեռաւ կորուսած մարդկութիւնը փրկելու համար: Սողոմոն ունէր երկրային իմաստութիւն, Քրիստոս ունէր երկնային իմաստութիւն: Սողոմոն ունէր այս կեանքի բարիքները, Քրիստոս աէր էր յաւիտենական ապագայ բարեաց:


Քրիստոս մեծ էր քան զՍողոմոն: Սողոմոն չէր գիտեր թէ օրն ինչ պիտի ծնանի, Քրիստոս գիտէր վախճանն սկիզբէն: Սողոմոն կարող չէր իշխել հովերուն և ոչ խաղաղեցունել ալիքները, Յիսուս կարող էր ընել երկուքն ալ: Սողոմոն կարող չէր բուժել հիւանդութիւն և ոչ յաղթել մահուան, Քրիստոս ոչ միայն կարող էր յանդիմանել հիւանդութիւնները, այլ և կարող էր բանալ գերեզմանը և դուրս կանչել մեռեալները:

Սողոմոն մեռած է, Քրիստոս յարութիւն առած է և այլ ևս չմեռնիր: Սողոմոն կարող չէր մինչև անգամ իշխել բուն իսկիւր հողւոյն վրայ, կամ կառավարել իւր կեանքն անգամ իւր ուսուցած կանոններուն համաձայն: Քրիստոս կարող էր կատարել և կատարեց իսկ բոլոր ասոնք: Սողոմոնէ մեծ, թագաւորներէն, մարգարէներէն և քահանաներէն մեծ, Աստուծոյ բոլոր հրեշտակներէն մեծ այս էակն է Հօրը միածինը շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն:

Մենք պիտի ուզէինք երկար ճամբորդութիւն մը ընել աւետելու համար Սողոմոնի իմաստութիւնը, անոր գեղեցիկ պալատը, անոր փառաւոր

դահլիճը, անոր հոյակապ տաճարը, բայց ոչ ապաքէն անփոյթ ենք ի մասին այն էակին որ աւելի մեծ է և սուրբ քան զՍողոմոն, և պիտի ցուցնէ մեզ աւելի բաներ քան զոր Սողոմոն ցուցուց Սարայի թագուհոյն, և պիտի ընէ զմեզ իրեն հետ ժառանգներ անշարժ թագաւորութեան մը:

չյաջողեցաւ, համոզուեցաւ թէ չէտակ էր իւր հօրեղբոր ըսածը, և ետ եկաւ առն՝ առնչու համար քիչ մը վարսակ, որով հրապուրեց մատաղածին և շուտով կարող եղաւ գիւրու թեամբ սանձ անցունել անոր:



ԻՆՉՊԵՍ ԲՈՆՈՒՅՑԱՆ ՄՈՏԱՂԱԶԻՆ

ԲՈՆԵՆԻ ՄՈՏԱՂԱԶԻՆ

Այս փոքրիկ տղան ուղեց հեծնալ իւր մատաղածին (Ֆրէյլէ) որ կը ճարակէր արօտին մէջ: Իւր հօրեղբայրն ըսաւ անոր որ հետը քիչ մը վարսակ առնաւ, բայց տղան խորհեցաւ թէ ինք աւելի աղէկ գիտէր, ինչպէս տղայոց ու մանք կը խորհին միշտ, և վստահ էր թէ կարող պիտի ըլլար բռնել մատաղածին: Երբ տղան փորձեց բռնել զայն սաստիկ յոգներով և քրտնելով և

ԿԻՐԱԿԻ ՕՐ ՄԸ ԿԵՍ ՕՐԷՆ ԵՏԻԸ


«Այս ի՞նչ ձայն է: Չեմ կարծեր թէ մարդոց թոյլ արուելու է այսպիսի անզուսպ տղայք բերել հասարակաց տան մը մէջ», պառաց Մարիամ երբ ի գուր կը ջանար քնանալ մինչ խուսէր մը տղայք կը խաղային և կը կուռէին իւր պատուհանին դուրսի կողմը: «Ի՞նչ զճ տղայք, չեն գիտեր թէ ինչպէս վարուելու են իրարու հետ», ըսաւ անոր սենեկակիցը Հուսթ, իւր աչքը վերցունելով Աստուածաշնչին

վրայէն որ բաց կը կենար ծունկին վրայ: «Այր խորհիմ թէ գէշ չըլլար դուրս ելլել և Սուրբ Գիրքէն քանի մը պատմութիւններ ընել անոնց կամ կարգալ:»

«Անտարակոյս շատ աղէկ պիտի ըլլայ այդ ոչ միայն սղայոց այլ նաև ինձ համար, վասն զի այն ատեն կըրնամ իմ քունս լնացունել անվրդով:» պատասխանեց Մարիամ. «բայց, Հռուսթ, խելքս հասնիր թէ ինչու

և պատմութիւններ լսել: Բոլոր պղտիկները յօժարութեամբ ընկերացան անոր մունտալով իրենց կռիւները և շրջապատեցին իրենց նոր բարեկամը: Հռուսթ սան մէջ վարժուհի էր մեծ նախակրթական դասու մը և գիտէր գրաւել փոքրիկներուն ուշադրութիւնը: Յաջորդ երկու ժամերն անցան շատ արագ մինչ սղայք մտիկ կ'ընէին Սուրբ Գրոց պատմութիւնները, և ի բերան սորվեցան ա-

տուցանելու համար: «Ի՞նչ բանի համար, պարոն», հարցուց Հռուսթ, տեսնելով որ մարդուն շրթունքը կը դողդոջէին իւր բռուն զգացումէն: «Մյն փոքրիկ քաղցր երգին համար զոր դուք սորվեցուցիք քանի մը մանկանց ասիկ երկու տարի առաջ կիրակի օր մը կէս օրէն ետքը: Իմ փոքրիկ լիդիաս շատ կը սիրէր այդ երգը, և երբ տարի մը առաջ բաժնու եցու մենէ, իւր վերթին խօսքն եղաւ ինչպէս որ այդ երգը երգուի իրեն: Մինչ կ'երգէի սխուր և կոտրած արտով «Թող տուէք որ մանկունք ինձի գան» ասլը, նա դնաց իւր փրկչին: Ես սորված էի այդ խօսքերը մանկութեանս օրերը, բայց երբ մեծացայ, մարտեցայ և հեռացայ փրկչէն զոր մայրս սորվեցուցած էր ինձ սիրել: Երբ ես առաւ իմ փոքրիկ լիդիաս իւր բազկաց վրայ, ես դարձայ անոր և նորէն իմ սիրաս սուրի այն Յիսուսին զոր սիրել սորվեցուցիք փոքրիկ աղջկանս: Ծնորհակալ եմ ձեզ այն օրհնութեան համար զոր ձեր խօսքերը բերին ինչպէս իմ սիրելի գաւակիս, նոյնպէս և ինձ:»



Փ Ո Ր

Փ Ո Ր

նոյշ փոքրիկ երգի մը խօսքերը զորս միաբերան երգեցին հաճոյքով:

Երեկոյն մայրերէն ոմանք շնորհակալ ե-

ղան Հռուսթի՝ կէս օրէն ետքի ժամանակը այնպէս հաճոյական ընելուն համար իրենց զաւակաց, և թէպէտ նա թիչ մը յոգնած էր այդ աշխատութեան պատճառաւ,

բերքը չցաւեցաւ «Սրածէ իմ գառնուկներս» պատուէրին հնազանդելուն համար:

Յաջորդ օրը երկու բարեկամք մեկնեցան այն տեղէն, և երկու տարի յետոյ դարձեալ նոյն գիւղն եկան իրենց պարապուրդն հոն անցունելու համար: Առաջին երեկոյն Հռուսթի այցելութեան եկաւ մարդ մը զոր նա յիշեց թէ առաջուց տեսած էր հոն:

«Շատ ուրախ եմ զձեզ դարձեալ տեսնելու համար», բաւ մարդը Հռուսթի՝ ձեռքն անոր երկնցունելով: Տարիէ մը հետէ կը փափաքէի տեսնել զձեզ իմ շնորհակալութիւնս մա-

տը փոչեքու որ ես ահաւոր զէնք: Այս ձուկն է յոյժ շատակեր, և բնախօս մը կ'ըսէ թէ այս տեսակին պատկանող փոքրիկ ձուկ մը հինգ ժամու մէջ կերաւ ուրիշ տեսակ ձկան նոր ելած 74 ձագերը, որոց իւրաքանչիւրն ունէր իբր քառորդ մասնաշափ երկայնութիւն: Իւր վրայ գիտնալու արժանի ամենէն հետաքրքրաշարժ բանն է բոյն շինելու կերպը, մանրակերպէն, մաղէ և ուրիշ նիւթերէ, զորս երբեմն կը ստիպուի բերել բաւական հեռու տեղերէ: Այս ձկան տեսակներէն ոմանք իրենց բոյնը կը կախեն ծովային խոտերու վրայ, և ոմանք բոյնը կը շինեն գետերուն յատակները, ինչպէս կ'երևի պատկերին մէջ: Բոյնը բոլորովին կը շինէ արու ձուկը, որ ձագ հասնելու եղանակին փայլուն կերպարան կը ստանայ: Տեսակներէն ոմանք պարանոցն է կարմիր, մարմնոյն մեծագոյն մասը դեղնորակ կանաչ, և վորին վարի

համար կիրակիին կէս օրէն ետքի ժամերը անցունես խումբ մը կռուասեր սղայոց համար: Հիմա ըսէ անոնց թէ պէտք է երթան սրտհին միւս ծայրը և եկուր դուն սլ քնացիր ինձ նման:»

Հռուսթ թօթուեց գլուխը երբ լսեց այս խօսքը, և դուրս ելաւ սենեակէն առանց ետ նայելու անգամ բարձրուն վրայ զորս իւր սենեակիցը այնքան հրապուրիչ կը գտնէր: Քանի մը վայրկեանէն ետքը հասած էր կռուարար սղայոց քով և զուարթ դէմքով կը հարցնէր թէ անոնցմէ որո՞նք կ'ուզէին վար իջնել մեծ կնճիկին տակը

կողմը՝ արծաթագոյն։ Արուն էզը կը հրատարակէ կամ կը մղէ բոյնը, ուր նա կ'ածէ իւր ձուերը և յետոյ կը թռչու կ'երթայ առանց երբեք փոյթ ընելու անոնց համար։ Արուն կը մնայ մօտը և կը հսկէ անոնց վրայ, կը վանէ թշնամիները, և ժամանակ ժամանակ իւր գլուխը ներս կը խոթէ տեսնելու համար թէ ամէն բան ըստ կարգին է։ Չոգերը կ'ելլեն երկու կամ երեք շաբաթէն, երբ հայրը կը պաշտպանէ զայնս քանի մը որ և կը սնուցանէ մինչև որ կարող ըլլան հոգալ իրենց պիտոյքը։

ՄԱՐԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՓՈՒՔԻ ԳՈՐԾ ՄԸ

«Ո՛հ, ես շատ կ'աճապարեմ, կը խնդրեմ, զիս չուտով հաղուեցուր,» ըսաւ Լուսիա իւր մօր։

«Գուն կը յուսաս թէ այսօր շատ պիտի զուարճանաս, այնպէս չէ՞»

«Այո,» ըսաւ Լուսիա, «ես իմ բնկերներուս հետ պիտի երթամ անտառը։ Մնաս բարեաւ, սիրելի մայրիկ»։

Լուսիայի գեղեցիկ մազերը լաւ ասնորում էին գողնոցին լայն ժապաւենները մաքուր կապուած էին և կօշիկները կոճկուած։ Փոքրիկ աղջիկը դունէն դուրս ելաւ շատ քաղցր և զուարթ դէմքով։

«Պէտք մեծ մայրս պատուհանէն կը նայի։ Խեղճ մամիկ, բոլոր օրը սենեկին մէջ պիտի մնայ։ Ի՛նչ ստակալի բան է ըլլալ ծեր և կաղ, և երբեք կարող չըլլալ դուրս ելլել զուարճանալու,» ըսաւ աղջիկն ինքն իրեն։

«Մնաս բարեաւ, մամիկ,» ըսաւ Լուսիա կենալով անգամ մը մինչ կը վազէր կ'երթար։

«Երթաս բարեաւ, սիրուն աղջիկս,» ըսաւ մեծ մայրը սիրալիբ ժպիտով մը, «կը յուսամ թէ զուարճալի օր մը պիտի վայելէք»։

Լուսիա աւելի կամայ քայլ սկսաւ, ինքն իրեն մտածելով. «Կ'ուզեմ որ իմ աղուոր բաներէս մին տամ մեծ մօրս։ Եւ սրչափ ուրախ պիտի ըլլամ։ Ես կ'ուզէի որ կարճ միջոց մը ծեր ըլլայի և նա ըլլար նորահասակ։ Բայց չեմ կրնար, ուրեմն օգուտ չունի խորհիլ այդ բանին վրայ»։

Ճիշդ այդ ժամանակ Լուսիայի միտքն եկաւ որ մեծ մօր պատուհանին վրայ տեսած էր թուռամած ծաղիկներով լեցուն աման մը։

«Էս կրնամ երթալ և ժողվել թարմ ծաղիկներ,» չնչեց ինքն իրեն, «բայց հիմա պէտք է երթամ շուտով։ Ըսի թագուհիին թէ կանուխ պիտի գամ»։

Կամայ կամայ յառաջ կը քայլէին

փոքրիկ սաքերը, յետոյ կեցան յանկարծ։

«Ի՛նչ անձնատէր եմ ես, կը խօսիմ մեծ բաներու վրայ որ չեմ կրնար ընել մեծ մօրս համար, և չեմ ուզեր ընել այսպիսի փոքրիկ բան մը,» ըսաւ և ետ դարձաւ պարտէզը։ Ի սկզբան աստպարանօք ժողվեց ծաղիկները, յետոյ սկսաւ կամայ կամայ ժողվել, աշխատելով լաւագոյն ծաղիկներն հաւաքել որչափ որ կարող էր զբոսնել։ Խնամով շարեց զայնս։

Մեծ մայրը վար ծռած էր իւր ակնոցն առելու համար երբ Լուսիա ետ դառնալով եկաւ պատուհանին առջև, և թուռամած ծաղիկները առնելով ամանէն անոնց տեղ դրաւ թարմ ծաղիկները մինչ մեծ մայրը դեռ ժամանակ ունեցած չէր նայելու։

«Ո՛հ, սիրելի աղջիկս,» ըսաւ մեծ մայրը, «բոլոր օրը երջանիկ պիտի ըլլամ իմ վրաս ունեցած քաղցր մտածութեամբդ, ես քու դէմքդ պիտի տեսնեմ այս ծաղիկներուն վրայ»։

«Մամիկ,» ըսաւ Լուսիա ծանրութեամբ, «կ'ուզեմ որ դարձեալ նորահասակ ըլլաս»։

«Երբեմն կ'ուզեմ,» ըսաւ մեծ մայրը, «վասն զի շատ հաճելի է ըլլալ նորահասակ և առողջ։ Բայց այսօր չեմ ուզեր, վասն զի եթէ նորահասակ ըլլայի, պիտի չունենայի սիրելի փոքրիկ աղջիկ մը որ մարդասիրութիւն կը ցուցնէ իւր մեծ մօր»։

«Ո՛հ, ես շատ ուրախ, շատ ուրախ եմ այդպէս ընելուս համար,» ըսաւ Լուսիա ինքն իրեն մինչ կը հեռանար մեծ մօր քովէն։

Գուք ալ փորձեցէք, սիրելի տղայք և աղջիկներ, և տեսէք թէ ի՛նչպէս ուրախ կ'ըլլաք երբ զձեզ սիրողներուն սիրտը կ'ուրախացունէք։ Եթէ Տէրը դրած է զձեզ ընամենկան քաղցր շրջանի մը մէջ, կ'ակնկալէ որ դուք ընէք զայն աւելի քաղցր ձեր շուրջ գտնուող իւրաքանչիւր անձին։

ՏԻՐԱՍԷՐ ԱՌԻՒԾ ՄԸ

Ի Սան Ֆրանչիսկոյ Ուուսուորստ կարարին կենդանաբանական բաժնին տեսուչը կ'ընէ հետաքրքրական և սրտաշարժ պատմութիւն մը առիւծի մը վրայ որ ժամանակ մը կը գտնուէր հոն։ Ի սկզբան առիւծն էր այնպէս վայրագ և կատաղի որ վտանգաւոր բան էր մօտենալ անոր վանդակին։ Բայց տեսուչն իւր ցուցած անընդհատ գործով և քաղցրութեամբ հետոյհետէ այնքան սիրելի եղաւ զազանին, որ սա թոյլ կու տար անոր մանեկ վանդակին մէջ. և եթէ նա պառկէր գա-

զանին քով, առիւծը կը վերցունէր իւր գլուխը որպէս զի անոր տար պատկերու կակուղ տեղ մը։ Օր մը պարտէզը մտաւ դիմով նաւաստի մը և սկսաւ նեղել առիւծը։ Տեսուչը դնաց մարդուն քով և ըսաւ որ նեղէ կենդանիները։ Նաւաստին բարկացաւ լսելով յանդիմանութիւնը և պատասխանեց թէ պիտի ընէր ինչ որ ուզէր, նաև բաւեցով զարկու տեսչին։ Առիւծն ասոր վրայ կատաղեցաւ բարկութեան և կը մռնչէր ստակալի, և իւր վանդակին պատը կազմող երկաթ ձողերուն այնքան սաստիկ կը զարնուէր որ նաւաստին փախաւ սարսափահար։ Այն ատեն գազանը հանդարտեցաւ և ցուցայց յոյժ մեծ ցնծութեան նշաններ երբ տեսուչը քովը գնաց և կը շայէր անոր գլուխը։

Ի վերջոյ առիւծը ուսուց մը ունեցաւ մարմնոյն վրայ։ Պէտք էր մեկ երկու թեթիւ գործողութիւններ կատարել, բայց ոչ ոք բաց այս մարդէն կարող էր մօտենալ գազանին։ Առիւծը թող առաւ անոր ճեղքել ուսուցը, և գործողութեան բոլոր միջոցին մարդուն վրայ կը նայէր երախտազիտութեան զգացումով, և երբ գործողութիւնն աւարտեցաւ, կը լքէր անոր ձեռքը։ Ուսուցը մեծցաւ և պէտք էր կատարել դժուարին գործողութիւն մը։ Տեսուչը երկիւղով սկսաւ գործողութեանը, վասն զի առիւծը անհանդարտ էր ցաւէն և տանջանքէն։ Բժիշկները խոհեմութիւն չհամարեցան երբ (անող սյացուցիչ դեղ) գործածել։ Հրահանգ տուին թէ գործողութիւնն ի՛նչպէս պիտի կատարուէր, թէ ո՛ր տեղը պիտի ճեղքուէր կամ կտրուէր։ Տեսուչն բրաւ իրեն արուած հրահանգին համեմատ. գործողութեան միջոցին փաղաքական խօսքեր կ'ընէր այնչեպէս կենդանուոյն, և առիւծը արիտ թեամբ դիմացաւ գանակին տուած ցաւերուն։ Բայց այս գործողութիւնը աւժամանակեայ հանգստութիւն միայն տուաւ գազանին, և սղորակին այնպիսի սաստիկ ցաւ կը զգար որ սրտաշարժը սպաննել զայն։ Տեսուչն առաւ իւր վեցհարուածեան ատրճանակը և կենդանին շոյեղէն ետքը հարուած մը արձակեց անոր գլխուն, ատրճանակին ցուրդը գացունելով անոր։ Առիւծը նայեցաւ անոր սրտաշարժ նայուածքով որոյ մէջ կ'երևէր զարմարում հեղանութեամբ խառն բայց ոչ բարկանութիւն։ Երեք հարուածով սպաննուեցաւ գազանը, որ բոլոր այն միջոցին իւր աչուրները երբեք չզատեց մարդէն։ Տեսուչը պատմեց այս բաները արտասուած զայն ընելով։



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒԹՅՈՒՆ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈՒ ՊՕՅԱԾԻԱՆ